Դիտողություններ և առաջարկություններ

«ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն թվականի սեպտեմբերի 12-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Իրական Հայաստանի գեղագիտության տեղորոշման և աջակցության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի հավելվածով ներկայացված «Իրական Հայաստանի գեղագիտության տեղորոշման և աջակցության» հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) ուսումնասիրությունը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս:

<u>Դիտարկում առաջին.</u>

Նախ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի իմաստով քննարկվող Հայցակարգը հանդիսանում է մշակույթի պահպանման, զարգացման և տարածման **պետական ռազմավարական ծրագիր.** որով կազմակերպվում է պետական մշակութային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում: Սա նշանակում է, որ այս փաստաթղթով ներդրվող յուրաքանչյուր սկզբունք և գաղափար պետք է ամրագրվի ծարահեղ զգուշավորությամբ, քանի որ մեծապես դրանից են կախված Հայաստանի Հանրապետության ներկայիս բնակչության և ապագա սերունդների հայրենաճանաչության դրսևորումները:

Ըստ էության այս նախագիծը «մշակութային հեղափոխություն» պլանավորող իրավական փաստաթուղթ է, որում փորձ է արվում տպավորություն ստեղծել Հայաստանի Հանրապետության մշակույթի թարմացման և ամրապնդման վերաբերյալ, սակայն խիստ տարօրինակ է, որ անգամ այդ գաղափարի մեջ պետականությունն ընդգծող **«Հանապետություն»** եզրույթը փոխարինվել է **«Իրական»** եզրույթով:

Այլ խոսքով՝ հասկանալի չէ, թե ինչու՞ է «Հայաստանի Հանապետություն» արտահայտության փոխարեն Հայեցակարգը վերնագրվել «Իրական Հայաստան» արտահայտությամբ: Այս գաղափարը հասկանալի չէ այն պարզ պատճառով, որ «Իրական» եզրույթի օգտագործումն ինքնին կասկածի տակ է դնում մինչ այժմ բոլորի կողմից ճանաչված «Հայաստանի Հանապետություն» տարածքի գեղագիտության նկարագիրը:

«Իրական» եզրույթի կիրառությունը տրամաբանական չէ նաև այն պարզ պատճառով, որ Հայեցակարգի սահմանմամբ՝ Հայաստանի քաղաքական և իրավական տարածությունը հայտարարված, հռչակված և ճանաչված է իբրև Հայաստանի Հանրապետության՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններով պարփակված տարածություն: Այսինքն, եթե Իրական Հայաստանն իր տարածքով նույնական է Հայաստանի Հանապետության տարածքին, ապա Հայեցակարգի վերնագրում Հայաստանի պետականությունը արտահայտող «Հանապետություն» եզրույթը ընդամենն իրադրություն խորհրդանշող «Իրական» եզրույթով փոխարինելը ոչ այլ ինչ է, քան թաքնված ուղերձ բնակչությանը՝ Հայաստանն առանց պետականության ընկալելու և այդ իրավիճակին որպես իրողություն վերաբերվելու և համակերպվելու պարտադրանքով:

Այդուհանդերձ, առաջարկում ենք Հայեցակարգի վերնագրում կատարել փոփոխություն՝ դաձնելով այն «Հայաստանի Հանրապետության գեղագիտության տեղորոշման և աջակցության» հայեցակարգ:

<u>Դիտարկում երկրորդ.</u>

Հայեցակարգում խնդրահարույց է նաև հայրենիքի և պետության նույնացման գաղափարը, ներկայացվելով այն որպես Հայաստանի Հանրապետության զարգացմանը, պետական շահերի իրացմանն ու պետության ներսում անհատի արժանապատիվ, անվտանգ, բարեկեցիկ կյանքի ապահովման նախադրյալ: Ավելին, խիստ մտահոգիչ է, որ Հայեցակարգում հայրենիքի և պետության նույնացումը ներկայացվում է որպես խաղաղությանն ուղղված ուղիղ քայլ:

Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» հստակ ներկայացված են «հայրենիք» և «պետություն» բառերի բացատությունները, որոնք չեն կարող իմաստային փոփոխությունների ենթարկվել իրավական ակտերով: Ըստ այդմ՝ «Հայրենիք» է անվանվում այն երկիրը, որտեղ մարդը ծնվել է ու որի քաղաքացին է: Այն երկիրը, ուր տվյալ ցեղի ժողովրդի բնակավայրն է եղել:

«Պետություն» եզրույթը բացատրված է որպես երկրի տիրող դասակարգի քաղաքական կազմակերպություն, որի նպատակն է պաշտպանել գոյություն ունեցող կարգերը և ճնշել ուրիշ դասակարգի դիմադրությունն ու պայքարը: Այս եզրույթն օգտագործվում է նաև պետական կառավարման մարմինների ամբողջությունն արտահայտելու իմաստով, ինչպես նաև, որպես քաղաքական կազմակերպություն ունեցող երկիր, տերություն:

Նույն բառարանում բացատրված է նաև «խաղաղություն» բառի նշանակությունը, ըստ որի խաղաղությունը պետությունների և ժողովուրդների միջև պատերազմների, ռազմական գործողությունների բացակայությունն է, խաղաղ՝ համերաշխ գոյակցությունը:

Ինչպես նկատում ենք, պետությունը քաղաքական կամքով և հարկադրանքի ուժով օժտված կազմակերպություն է, որի բաղադրիչներից մեկն այն տարածքն է, որի սահմաններում գործում է այդ կազմակերպությունը: Մինչդեռ հայրենիքը այն տարածքն է ուր մարդիկ և նրանց նախնիները ծնվել և ապրել են՝ անկախ պետության առկայությունից կամ բացակայությունից:

Ուստի զարմանալի է, որ հայրենիքի ու պետության նույնացման գաղափարը Հայեցակարգում արդարացվում է հանրության կողմից իրենց բնակավայրերի ճանաչողությանը նպաստելու ակնկալիքով: Խնդիրն այն է, որ Ճանաչողությունը գործընթաց է, որը կարելի է իրականացնել տարբեր տեխնիկաների, միջոցների և մեթոդների գործադրմամբ: Մինչդեռ հայրեիքի վերաբերյալ տեղեկությունները փաստագրված են մեծանուն հայ և օտարերկրացի պատմիչների ու պամաբանների աշխատություններում և մշակութային ժառանգություն են հանդիսանում ինչպես հայ, այնպես էլ օտար ազգերի համար:

Հետևաբար, ակնհայտ է, որ հայրենիքի և պետության նույնացումով պատմական փաստերի ոչնչացմանն ուղղված թաքնված գաղափարի իրագործումը չի կարող ընդունվել

որպես խաղաղության հաստատման ուղի: Խաղաղությունն իրավիճակ է, որը կարող է հաստատվել իրավական փաստաթղթերով, իսկ պետության և հայրենիքի նույնացումը անցյալի փաստերի նկատմամբ մերժողական մոտեցում է, որը հատկապես վտանգավոր է ներկայիս պայմաններում, երբ Ադրբեջանի Հանրապետությունն իր ագրեսիվ զավթողական քաղաքականության շրջնակներում գործուն քայլեր է ձեռնարկում ՀՀ տարածքում իր մտացածին «Արևմտյան Ադրբեջանի» գոյությունը հաստատելու համար:

Այսպիսով, առաջարկում ենք Հայեցակարգում վերանայել «հայրենիքի» և «պետության» նույնացման գաղափարի սահմանումն ու պնդումը, և Հայաստանի Հանրապետության գեղագիտության տեղորոշումն ու աջակցությունն իրականացնել առանց պատմական փաստերի ոտնահարման, հերքման և խեղաթյուրման:

Չնայած, պետք է արձանագրենք, որ սույն նախագիծը և դրա հիմնավորումներն ամբողջությամբ լուրջ վերանայման կարիք ունեն, ըստ իս այն պետք է քննարկել հասարակության լայն շրջանակի և մասնագիտական համայնքի ներկայացուցիչների հետ, այլ ոչ թե բավարարվել միայն սահմանափակ ժամկետով իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրելով և սակավաթիվ առաջարկներ ստանալով կամ արհեստական «կողմ եմ» կամ «դեմ եմ» գնահատման միավորներ հավաքելով:

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների

Պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ